

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐՄՆ

ՍԱՐԳԻՍ ԼՅՈՎԱՅԻ ԹՈՐՈՍՅԱՆ

**ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԺԲ.00.02-«Հանրային իրավունք-սահմանադրական, վարչական, ֆինանսական, նունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2012

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ТОРОСЯН САРКИС ЛЕВАЕВИЧ

**ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ
ИЗБИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02-«Публичное право-конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

Ереван-2012

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝

**իրավաբանական գիտությունների դրվոր,
պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան**

Պաշտոնական լինդիմախոսներ՝

**իրավաբանական գիտությունների
դրվոր Հ.Մ. Ստեփանյան**

**իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Է.Է. Շաբիրյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունվարի 18-ին ժամը 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորիրդի նիստում (0025, թ. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցարակում:

Սեղմագիրն առարվել է 2012թ. դեկտեմբերի 18-ին:

**Մասնագիտական խորիրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ**

Ա. Գ. Վաղարշյան

**Тема диссертации утверждена в академии государственного управления
Республики Армения**

Научный руководитель:

**доктор юридических наук,
профессор В. В. Степанян**

Официальные оппоненты:

**доктор юридических
наук О.М. Степанян
кандидат юридических наук,
доцент Э.Э. Шатирян**

Ведущая организация: Центр конституционного права РА

Защита состоится 18-го января 2013 г., в 14⁰⁰ часов на заседании специализированного совета ВАК-а 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алекса Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 18-ого декабря 2012г.

**Ученый секретарь специализированного совета,
Кандидат юридических наук, доцент**

Ա. Գ. Վագարշյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ընտրված քենայի արդիականությունը:

Ներկայիս ժողովրդավարական երկրներում դժվար է գերազնահատել ընտրությունների դերը և նշանակությունը: Դժվար է պատկերացնել երկրի համար ավելի կարևոր հասարակական-քաղաքական իրադարձություն, քան ընտրություններն են /հանրաքեններ/:

Ընտրությունները հանդիսանում են ժողովրդահշխանության իրացման անմիջական ձևերից մեկը, որի արդյունքում են ճևադրություն երկրի բարձրագույն իշխանության մարմինները /պետության գլուխը, պառամենտը, տեղական ինքնակառավարման մարմինները/, որոնք որոշում են պետության ամրող ներքին և արտաքին քաղաքականությունը՝ դրանով իսկ կերտելով երկրի ապագան: Ընտրությունների արդյունքում է իրացվում անձի ամենակարևոր քաղաքական իրավունքներից մեկը՝ ընտրելու իրավունքը, որը ճանաչվում է ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային հանրաճանաչ փաստաթղթերով /«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիա», «Մարդու իրավունքների համբողիանուր հոչակագիր», «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր»/:

Ընտրությունները, հանդիսանալով սահմանադրական կարգի հիմնարար ինստիտուտներից մեկը, կարևոր քաղաքական և իրավական նշանակություն ունեն ցանկացած պետության համար, սակայն, ընտրությունների դերը և նշանակությունը առավել է կարևորվում հատկապես նորանկախ պետությունների համար, որոնք նոր են անցում կատարում դեպի ժողովրդավարական կարգեր:

Ահրամեջու է հատկապես կարևոր ընտրությունների անցկացման կարգը, քանի որ ինքնին ընտրությունների անցկացումը դեռևս բավարար չէ, որպեսզի հնարավոր լինի խոսել իրական ժողովրդահշխանության մասին: Դրա համար պետք է, որ ընտրությունները լինեն ազատ, արդար և իրապես արտահայտեն ժողովրդի կամքը, իսկ դա մեծապես կախված է ընտրական համակարգի արդյունավետությունից:

Տարբեր ժամանակաշրջաններում ընտրություններն անցկացվել են տարբեր ձևերով և եղանակներով: «Ընտրություն» հասկացությունը սկիզբ է առել դեռևս տոհմատիրական կարգերից, ընտրություններ անցկացվել են դեռևս ինն ստրկատիրական ժամանակաշրջաններում /չին Հռոմում, չին Հունաստանում/, սակայն ընտրությունների անցկացումը հատկապես տա-

րածում գտավ կապիտալիստական կարգերի զարգացման ժամանակաշրջանում: Պետության և իրավունքի զարգացմանը զուգահեռ զարգացել է նաև ընտրությունների անցկացման կարգը: Ժամանակի ընթացքում փոփոխվել են թե ընտրվող մարմինները, թե ընտրողների շրջանակը և թե ընտրության մեթոդներն ու եղանակները: Ներկայիս իմաստով ընտրությունները սկսել են անցկացվել 17-րդ դարում, իսկ դրանց դերը և նշանակությունը հատկապես բարձրացավ 20-րդ դարում ժողովրդավարական կարգերի տարածմանը զուգահեռ:

Ներկայում աշխարհում ընտրական համակարգերի հարցում միասնական մոտեցում չկա: Յուրաքանչյուր երկիր կառուցում է իր ընտրական համակարգը՝ ելնելով իր ժողովրդի ազգային առանձնահատկություններից, ավանդույթներից, ժողովրդավարության մակարդակից, իրավական համակարգի և քաղաքարիվ այլ առանձնահատկություններից: Թեև, ներկայում տարբեր միջազգային կառույցների կողմից /ԵԱՀԿ, Եվրոպայի Խորհրդը և այլն/ փորձեր են արվում մշակելու ընտրությունների անցկացման որոշակի չափանիշներ:

Հշիարհում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի միասնականության բացակայությունը ապելի է դժվարացնում ընտրական համակարգի և դրա զարգացման ուղղությունների ընտրության հարցը, հատկապես այնպիսի նորանկախ պետության համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը:

Անին, ընտրական համակարգի ձևավորումն ու զարգացումը կենսական նշանակություն ունեցող խնդիր է ցանկացած նորանկախ պետության համար: Հայաստանի Հանրապետությունը դեռևս այդ խնդրի լուծման ճանապարհին է: Հայաստանի Հանրապետությունում անկախացումից հետո բավականին կարծ ժամանակահատվածում ընդունվել են ընտրությունները կարգավորող մի շարք օրենքներ /օրենսգրքեր/, իսկ դրանցում կատարվել բազմաթիվ փոփոխություններ: Մասնավորապես, նախորդ ՀՀ Ընտրական օրենսգրքի շուրջ 12-ամյա պատմության ընթացքում դրանում 11 անգամ կատարվել են փոփոխություններ և լրացուներ, որոնցից շատերը սկզբունքային փոփոխություններ են մտցրել ՀՀ ընտրական համակարգում: Իսկ 2011 թվականին արդեն ընդունվեց նոր ՀՀ ընտրական օրենսգրքը, որով նույնական դրույթ համակարգային փոփոխություններ կատարվեցին: Վերոնշյալ փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը դեռևս փնտրությունների մեջ է՝ ընտրական համակարգի ձևավորման և դրա զարգացման ուղղությունների որոշական հարցում:

Այդ իսկ պատճառով ներկայումս շափազանց արդիական է սույն թեմայով կատարվող հետազոտությունը:

Չնայած որա կարևորությանը՝ Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների վերաբերյալ գիտական աշխատությունները շատ քիչ են, իսկ Ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում թեմայով որևէ ծավալուն գիտական հետազոտություն չի կատարվել: Այնինչ, նորանկախ Հայաստանի Հանրապետության համար ընտրությունները հանդիսացել են, թերևս, ամենախնդրահարույց հասարակական քաղաքական գործընթացները անկախության ամբողջ ժամանակաշրջանում: ՀՀ գրեթե բոլոր ընտրությունների ժամանակի ի հայտ են եկել ընտրական համակարգի բազմաթիվ թերություններ, ինչն արձանագրել են բազմաթիվ միջազգային և տեղական դիտորդական առարկելությունները:

Ընտրական համակարգը մշտապես զարգացող, բարդ և համակարգային երևույթ է, որը մշտապես կարիք ունի կատարելագործման: Այդ պատճառով անհրաժեշտ է որոշել ընտրական համակարգի զարգացման այն սկզբունքային ուղղությունները, որի հիման վրա պետք է իրականացվեն օրենսդրական հետագա բարեփոխումները: Այսուել անհրաժեշտ է ցուցաբերել առավելագույն գգուշություն, քանի որ այս հարցում յուրաքանչյուր սխալը կարող է բացասաբար ազդել ժողովրդավարության մակարդակի վրա, իսկ տարբեր ընտրական համակարգերի ներդրման անհարկի փորձարկումները կարող են զգալիորեն խոչընդոտել երկրում ընտրական մշակույթի ձևավորմանը:

Նման պայմաններում ՀՀ ընտրական համակարգի սկզբունքային հիմնախնդիրների վերհանումը, դրանց բազմակողմանի վերլուծությունը և համապատասխան եզրակացությունների առաջ քաշումը, մեր կարծիքով, դիտում է ժամանակի պահանջներից:

Ատենախոսությունում փորձ է արվել վեր հանել ՀՀ ընտրական համակարգի սկզբունքային հիմնախնդիրները, ուսումնասիրել դրանց հնարավոր լուծումների միջազգային փորձը և բազմակողմանի վերլուծության արդյունքում առաջարկել այդ հիմնախնդիրների լուծման հնարավոր տարրերակները Հայաստանի Հանրապետության համար: Ուսումնասիրվել են ՀՀ ընտրական համակարգի առավել էական և որոշիչ տարրերը, որոնք և առանձնացնում են ՀՀ ընտրական համակարգը աշխարհի այլ երկների ընտրական համակարգերի մեջ:

Հիմնականում նշված հանգանանքներով է պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ընտրական համակարգի ձևավորման և զար-

գացման հիմնախնդիրների բազմակողմանի և համակարգային վերլուծության ենթարկելու ցանկությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան:

Սույն հետազոտության օբյեկտը են հանդիսանում այն հասարակական հարաբերությունները, որոնք կապված են Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի հետ:

Սույն հետազոտության առարկա են հանդիսանում օրենսդրությունը, ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգը, ընտրությունների կազմակերպման և անցկացման պրակտիկան, գիտական վերլուծական միտքը:

Հետազոտության նպատակները և խնդիրները:

Սույն ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ ընտրական համակարգի սկզբունքային հիմնախնդիրների վեր հանումը, այդ հիմնախնդիրների վերլուծությունը և դրանց լուծման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը, ընտրական համակարգի զարգացման հնարավոր հետանկարների որոշակիացումը:

Առաջ քաշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- «Ընտրական համակարգ» հասկացության բացահայտումը,
- Ընտրական համակարգի տարրերի վերհանումը,
- Ընտրական համակարգի հիմնական տարրերի վերլուծությունը,
- ՀՀ ընտրական մարմինների համակարգի ուսումնասիրությունը և վերլուծությունը, դրական և բացասական կողմերի վերհանումը, առկա հիմնախնդիրների վերլուծությունը,
- ընտրողների գրանցման համակարգի ուսումնասիրությունը և առկա հիմնախնդիրների վերհանումը և վերլուծությունը,
- թեկնածուների առաջադրման և գրանցման կարգի ուսումնասիրությունը և վերլուծությունը,
- նախընտրական քարոզության իրականացման և ֆինանսավորման կարգի ուսումնասիրությունը, առկա խնդիրների վերլուծությունը,
- քվեարկության համակարգի, ինչպես նաև քվեարկության այլնութանքային մեթոդների զարգացման հետանկարների ուսումնասիրությունը:

Ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդոլոգիական հիմքը:

Ատենախոսությունում օգտագործվել են սահմանադրական իրավունքի և ընտրական իրավունքի ոլորտի դասական աշխատանքները, մենագրությունները, գիտական հոդվածները, որոնք վերաբերում են ընտրական իրա-

վունքի սկզբունքներին, զարգացման պատմությանը, ընտրական համակարգերին և այլն:

Ուսումնասիրվել են հատկապիս ոռու գիտնականների աշխատություններ: Այդ աշխատությունների շարքում հատկապես առանձնանում են Վ. Վ. Մակրակովի, Դ.Ա. Շեղոնկի, Բ. Ա. Ստրաշոնի, Վ. Ե. Չիռկինի, Մ. Վ. Բագլյայի և այլոց աշխատանքները: Ուսումնասիրվել են նաև որոշ հայրենական և արևմտյան գիտնականների աշխատություններ:

Ուսումնասիրվել են այնպիսի հեղինակավոր ամսագրերում գետեղված գիտական հոդվածներ, ինչպիսիք են՝ ‘Журнал о выборах’, ‘Российское право’ և այլն:

Աշխատանքում օգտագործվել են տարրեր հեղինակավոր միջազգային կառույցների (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Վենետիկյան համաժամողով, ԵԽԽՎ) եղբակացությունները, գեկույցները, կանոնագրերը, ուղեցույցները, ՀՀ ընտրությունների վերաբերյալ դիտորդական առաքելությունների գեկույցները և այլ փաստաթղթեր, որոնք սահմանում են ամրող աշխարհում ընտրական համակարգերի լավագույն չափանիշները: ‘Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել ԵԱՀԿ Կոպենհագենյան փաստաթուղթը, Վենետիկյան համաժամողովի «Ընտրական գործընթացներում լավ գործելակերպի կանոնագիրը», ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Ժողովրդավարական ընտրությունների համար գործող պարտավորությունները ԵԱՀԿ անդամ պետություններում», «Ընտրական օրենդրական համակարգի վերանայման ուղեցույցը» և բազմաթիվ այլ փաստաթղթեր:

Ատենախոսության նորմատիվ հիմքը կազմել են ինչպես գործող, այնպես էլ նախկին օրենդրական ակտերը /ՀՀ ընտրական օրենսգիրք, ԿԸՀ որոշումներ և այլն/, ինչպես նաև ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերը:

Որպես ատենախոսական հետազոտության մերող կիրառվել են ինչպես օրյեկտիվ իրականության ընկալման համագիտական մեթոդները, այնպես էլ իրավագիտությանը բնորոշ հասուն միջոցներն ու հնարքները, որոնցից են դիալեկտիկական, պատմական, դիլուկցիայի և ինդուկցիայի, համակարգակառուցվածքային, վիճակագրական, համեմատական-իրավական և այլ մեթոդները:

Հետազոտությամբ առաջ քաշված գիտական նորույթները:

Ատենախոսության նորույթը առաջին հերթին կապված է առարկայով, նոպատակով և խնդիրներով: Աշխատանքն իրմինց ներկայացնում է ՀՀ ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրների

բազմակողմանի վերլուծություն: Աշխատանքում վեր են հանվել ՀՀ ընտրական համակարգի սկզբունքային հիմնախնդիրները, որոշակիացվել զարգացման ուղղությունները, դրանք ենթարկվել մանրամասն վերլուծության, առաջ քաշվել այդ հիմնախնդիրների լուծման, ընտրական համակարգի կատարելագործման և զարգացման ուղղությունների ընտրության վերաբերյալ որոշակի առաջարկություններ՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

Որպես այդ ամենի հետևանք՝ գիտական շրջանառության մեջ են դրվել նոր տեսական և նորմատիվ դրույթներ ու գաղափարներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն զուտ ընտրական իրավունքի գիտության համար, այլև այլ իրավաբանական գիտությունների համար:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

Համաձայն կատարված գիտական հետազոտության արդյունքների և դրանից արված եղբակացությունների՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. Ընտրական համակարգի հիմնախնդիրն ուսումնասիրելու համար առաջին հերթին անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու «ընտրական համակարգ» հասկացության բովանդակությունը: Տեսլրյան մեջ բացակայում է «ընտրական համակարգ» հասկացության միատեսակ սահմանումը, ինչի արդյունքում այն ընկալվում է տարրեր իմաստներով: Որոշ դեպքերում այն ընկալվում է որպես հասարակական հարաբերությունների ամրողություն, մեկ այլ դեպքում՝ իրավական նորմերի ամրողություն, մեկ որիշ դեպքում՝ միայն իրավական նորմերով կարգավորվող հարաբերությունների ամրողություն: Այնուհետեւ, այդ հարցի շուրջ կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները թույլ են տալիս ընտրական համակարգն ընդհանուր առմանը բնորոշելու որպես իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ամրողություն, որոնք կապված են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների որոշման հետ:

2. Ընտրական իրավունքի զարգացման արդի պայմաններում հստակորեն ուրվագծվել է «ընտրական համակարգ» և «ընտրակարգ» հասկացությունների տարանջատման անհրաժեշտությունը: Դա պայմանափորձած է նրանով, որ դրանք հաճախ ներկայացվում են միևնույն՝ «ընտրական համակարգ» հասկացությամբ: Արդյունքում միևնույն հասկացությունը ընկալվում է տարրեր իմաստներով, այնինչ դրանք ունեն լիովին տարրեր բովան-

դակուրյուն: Անհրաժեշտ է «ընտրական համակարգ» հասկացությունից հստակորեն տարանջատել «ընտրակարգ» հասկացությունը, որպես քվեարկության արդյունքների հիման վրա ընտրությունների արդյունքների որոշման կարգ: «Ընտրակարգը» «ընտրական համակարգի» տարրերից միայն մեկն է և չի կարող նույնանալ վերջինիս հետ:

3. ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ ընտրատարածքների կազմավորման ներկայիս համակարգը չի ապահովում ընտրատարածքների բաժանման հիմնական սկզբունքի (բնակչության հավասարության) առավելագույնս պահպանումը: Գործող համակարգի պարագայում ընտրատարածքները բաշխվում են ըստ մարզերի և դրա հիման վրա յուրաքանչյուր մարզում կազմավորվում են որոշակի թվով ընտրատարածքներ: Արդյունքում, տվյալ մարզի շրջանակներում կազմավորվող ընտրատարածքների բնակչության թվաքանակի միջև հնարավոր է լինում ապահովել հավասարություն, սակայն տարբեր մարզերում կազմավորված ընտրատարածքների բնակչության թվաքանակի միջև, ընդհակառակը, հնարավոր են դառնում գգալի տատանումներ, ինչի արդյունքում տարբեր մարզերի ընտրողների ձայնի կշիռը լինում է տարբեր՝ խախտելով հավասար ընտրական իրավունքի սկզբունքը: Առաջարկվում է իրաժարվել ընտրատարածքներն ըստ մարզերի բաշխելու ներկայիս համակարգից՝ ապահովելով բնակչության հավասարության սկզբունքի պահպանումը բոլոր ընտրատարածքների միջև:

4. Հայաստանի Հանրապետության նման նորանկախ պետություններում, որտեղ ընտրությունների կազմակերպման և անցկացման հարցերում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ և որտեղ դեռևս ձևավորված չեն պատշաճ ընտրական մշակույթ, ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը ընտրական հանձնաժողովների միջոցով ներկայումս լավագույն և դեռևս այլընտրանք չունեցող մողելն է: Թեև պետական կառավարման մարմինների կողմից ընտրությունների կազմակերպման և անցկացման համակարգն ունի իր առավելությունները, և այն պետք է դիտարկել որպես հեռահար նպատակ, սակայն այդ մողելին պետք է անցում կատարել միայն ընտրությունների կազմակերպման և անցկացման երկարամյա փորձի կուտակման, այդ ոլորտում առկա հիմնական խնդիրների լուծման, ինչպես նաև պետական կառավարման մարմինների նկատմամբ հանրության առավել բարձր վատահության ձևավորման պայմաններում:

5. Հայաստանի Հանրապետությունը 2007 թվականից իրաժարվեց արտասահմանում քվեարկության կազմակերպումից (հետագայում արտա-

սահմանում քվեարկելու հնարավորություն տալով միայն դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց արտասահմանում գտնվող ներկայացուցչությունների աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին՝ ինտերնետային եղանակով): Դրանից հրաժարվելով պայմանավորված էր տարբեր գործոններով, որոնցից մեկը երկրադարձության ինստիտուտի ներդրման հետ կապված հնարավոր դժվարություններն էին: Սակայն, միայն որոշակի դժվարությունների առկայությունը, որոնք ըստ էության հաղթահարելի են, չեն կարող նման սահմանափակման պատճառ լինել: Արտասահմանում քվեարկության կազմակերպումից հրաժարվելու ըստ էության սահմանափակում է արտասահմանում օրինական հիմքերով գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրելու իրավունքը և որոշակիորեն հակառակում ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հետ: Այդ սահմանափակումը չի տեղափորվում ընտրական իրավունքի իրավաչափ սահմանափակումների շրջանակներում: Ուստի, անհրաժեշտ է վերականգնել օտարերկրյա պետություններում քվեարկության կազմակերպումը՝ համապետական ընտրությունների ժամանակ օտարերկրյա պետություններում գտնվող ՀՀ բոլոր քաղաքացիների համար կազմելով առանձին ընտրացուցակներ:

6. Թեկնածուներին ներկայացվող ստորագրությունների հավաքագրման և ընտրական գրավի վճարման պահանջների սահմանման հիմնական նպատակը «ոչ լուրջ» աջակցություն ունեցող թեկնածուների գրանցման բացառումն է: Նախկինում այդ երկու պահանջները Հայաստանի Հանրապետությունում գործում էին զուգահեռաբար, սակայն հետագայում ստորագրությունների հավաքագրման պահանջը հանվեց՝ խոսափելով դրա գործնական դժվարություններից և փոխարենը բարձրացնելով ընտրական գրավի չափը: Թեև ստորագրությունների հավաքագրման համակարգն իրոք ունի որոշակի թերություններ, սակայն, Հայաստանի Հանրապետությունում դրանից ամրողությամբ հրաժարվելու և միայն ընտրական գրավի կիրառումը առավելագույն չի ապահովում վերոնշյալ նպատակի իրականացումը: Դրանով թեկնածուի գրանցումը կախվածության մեջ է դրվում ոչ թե որոշակի ընտրազանգված ունենալու հետ, այլ՝ ընդհանուր ֆինանսական միջոցներ ներգրավելու կարողության հետ: Ուստի, անհրաժեշտ է ընտրական գրավի չափի բարձրացման փոխարեն վերականգնել ընտրությունների ստորագրությունների հավաքագրման պահանջը (բացառությամբ ՏԻՄ ընտրությունների) այն թեկնածուների համար, ովքեր նախորդ երկու

ընտրություններին չեն մասնակցել կամ մասնակցելու դեպքում ստացել են ծայսների ոչ ավել, քան մեկ տոկոսը: Դրանով հնարավոր է լինում կանխել չնշին աջակցությամբ թեկնածուների գրանցումը՝ միաժամանակ անհարկի չծանրաբեռնելով որոշակի աջակցություն ունեցող թեկնածուներին ստորագրությունների հավաքագրման ժամանակատար պահանջով:

7. Նախընտրական քարոզչության ներկայիս համակարգը առավելագույնս չի ապահովում թեկնածուների համար հավասար պայմաններ, իսկ ընտրողների համար՝ մատչելի և օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու և տեղեկացված ընտրություն կատարելու հնարավորություն: Նշված խնդիրները լուծելու և այն նախընտրական քարոզչության բուն նպատակներին ծառայեցնելու նպատակով անհրաժեշտ է՝

- արգելել վճարովի քաղաքական գովազդը հեռուստառադիրներություններով և արտաքին գովազդի միջոցով՝ դրա փոխարեն մեծացնելով անվճար եթերաժամի ծավալները,
- ներդնել նախընտրական քարոզչության պետական ֆինանսավորման համակարգ՝ աստիճանաբար մեծացնելով պետական ֆինանսավորման կշիռը նախընտրական ծախսերի մեջ՝ ձգտելով դեպի ամբողջությամբ պետական ֆինանսական միջոցներով նախընտրական քարոզչության անցկացմանը,
- նախընտրական քարոզչության իրավական կարգավորման հետագա զարգացման և քարեփոխման ընթացքում որպես կարևոր ելակետ ընդունել պետության և իշխանական թեկնածուի տարանջատման անհրաժեշտությունը,
- ուղղակիորեն արգելել պաշտոնական մեկնարկից առաջ նախընտրական քարոզչության իրականացումը՝ տալով նախընտրական քարոզչության հստակ սահմանումը:

8. Հայաստանի Հանրապետությունում քվեարկության այլընտրանքային մերուները խստ սահմանափակ են: Այդ պարագայում ընտրելու իրավունքի իրացման հնարավորությունների շրջանակը քավականին նեղանում է, ինչը չի բխում իրավունքի իրացման համար իրական երաշխիքների ապահովման սկզբունքային անհրաժեշտությունից: Ներկայումս որպես քվեարկության այլընտրանքային մերու նախատեսված է ինտերնետային քվեարկությունը, սակայն դրանից օգտվելու հնարավորություն է տրվում միայն ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողներին եւ նրանց հետ արտերկում բնակվող ընտանիքի ընտրելու իրավունք ունեցող ան-

դամներին, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց արտասահմանում գտնվող ներկայացուցչությունների աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչը բավարար չէ: Անհրաժեշտ է զարգացնել ներդրված համակարգը՝ աստիճանաբար ընդլայնելով այդ մերուդով քվեարկելու իրավունքը ունեցող անձանց շրջանակը՝ ընդգրկելով նաև Ելեկտրոնային բվային ստորագրության հավաստագիր ստացած անձանց: Ընդուրում, այդ անձանց շրջանակի ընդլայնումը անհրաժեշտ է կատարել աստիճանական և փորձարկային եղանակով՝ յուրաքանչյուր հաջորդ փուլին անցում կատարելով միայն նախորդ փուլի հիմնական թերությունները վերացնելուց և դրանց կրկնվելով կանխարգելելուց հետո:

Հետազոտության գործնական արժեքը:

Աշխատանքում առաջ քաշված գաղափարները, հիմնավորումները, դատողություններու ունեն ոչ միայն տեսական նշանակություն, այլև՝ կարևոր գործնական նշանակություն, քանի որ դրանք կարող են օգտագործել ընտրական հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենսդրական ակտերում, մասնավորապես ՀՀ ընտրական օրենսգրքում:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ընտրական օրենսդրության բարեփոխումների փուլում: Այդ մասին է վկայում նաև 2011 թվականին նոր ընտրական օրենսգրքի ընդունումը, որը որոշ սկզբունքային փոփոխություններ է նախատեսում ընտրական համակարգում: Հետևաբար, ՀՀ ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված գիտակերլուծական աշխատության առկայությունը գործնական կարևոր նշանակություն կարող է ունենալ այդ բարեփոխումները կատարելիս: Բացի այդ, աշխատանքը կարող է հիմք հանդիսանալ ուսումնական, մերուդանական և գիտական գրականության պատրաստման ժամանակ, ինչպես նաև «Ընտրական իրավունք» ուսումնական դասընթացի դասավանդման ընթացքում:

Առենախտության արյունքների ապրոբացիան:

Կատարված հետազոտության իրավական և կիրառական նշանակություն ունեցող հատվածները ներկայացվել են երեք գիտական աշխատանքներում՝ «Ընտրատարածքների կազմավորման սկզբունքները», «Թեկնածուներին առաջադրվող պահանջները Հայաստանի Հանրապետությունում» և «Ընտրացուցակների կազմման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմաներով: Այս հոդվածներում արտացոլվել են առենախտության մի շարք կարևորագույն դրույթներ: Առենախտության

հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավունքի և օրենսդրական գործընթացի ամբիոնի նիստերում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրության արդիականությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, ատենախոսության տեսական, նորմատիվ և մեթոդոլոգիական հիմքերը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության գործնական նշանակությունը և արդյունքների ապրոբացիան:

Աշխատանքի առաջին գործը վերաբերում է ընտրական համակարգի հասկացությանը և տարրերին և բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին՝ «Ընտրական համակարգ» հասկացությունը և տարրերը» պարագրաֆում ուսումնասիրության են ենթարկվում «Ընտրական համակարգ» հասկացությունը և դրա տարրերը, ինչպես նաև «Ընտրական համակարգ» և «Ընտրակարգ» հասկացությունների հարաբերակցության խնդիրը:

Ընտրական համակարգի մասին խոսելիս առաջին հերթին անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ «Ընտրական համակարգ» հասկացությանը և բացահայտել դրա բովանդակությունը: Թեև իրավաբանական գրականությունում բավականին շատ են «Ընտրական համակարգ» հասկացության վերաբերյալ քննարկումները, սակայն այդ հասկացության սահմանման հարցում չկա միատեսակ մոտեցում, և այն ընկալվում է տարրեր առումներով: Մասնավորապես, մի դեպքում այն ընկալվում է որպես հանրային իշխանության ընտրովի մարմինների ընտրության կարգ /այն առումով/, իսկ մյուս դեպքում որպես քվեարկության արդյունքների հիմնան վրա ընտրված թեկնածուին /թեկնածուներին/ որոշելու միջոց, այսինքն, ընտրությունների արդյունքների որոշման միջոց: Թեև նույն տերմինի գործածմանը խոսքը փաստորեն երկու տարրեր երևույթների մասին է: Իսկ երկու տարրեր երևույթներ միևնույն տերմինով սահմանելու արդյունքում անհարկի շփորձունք է առաջանում ինչպես տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում: Այդ առումով ատենախոսության մեջ փորձ է արվում տարանջատել այդ հասկացությունները՝ տալով դրանց բնորոշումը և առանձնացնելով «Ընտրակարգ» հասկացությունը՝ որպես ընտրությունների արդյունքների որոշման միջոց: Վերջինս, թեև ոչ ամբողջական, սակայն արդին իսկ իր գործածությունն է գտնում տեսության մեջ, ինչպես նաև գործածվում օ-

րենսդրական և դատական ակտերում: Դրանով հնարավոր է լինում խուսափել «ընտրական համակարգ» տերմինի շուրջ առաջացող շփորձունքից և տեսական բանավեճերից, որոնք երթևն առարկայագրություն են և կրում են գույտ տերմինարական բնույթը:

Բացի այդ, նույնիսկ այն հեղինակների կարծիքները, ովքեր ընտրական համակարգը ընկալում են միայն լայն առումով կամ տարբերակում են ընտրական համակարգը լայն և նեղ առումներով, միատեսակ չեն: Գիտնականների մի խումբ «Ընտրական համակարգը» հասկանում է որպես հասարակական հարաբերությունները, մյուսները՝ իրավական նորմերի ամբողջություն, երրորդները՝ միայն իրավական նորմերով կարգավորվող հարաբերություններ՝ իրավահարաբերություններ: Ատենախոսության մեջ կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ առավել հիմնավոր է թվում ընտրական համակարգը իրավական նորմերով կարգավորված հարաբերությունների ամբողջություն դիտարկելը: Այս դեպքում հնարավոր է լինում խուսափել «Ընտրական համակարգ» հասկացությունը այլ հասկացությունների հետ նույնացնելու հնարավորությունից:

Ընտրական համակարգն ուսումնասիրելիս կարևոր նշանակություն է ծեղոր թերում հատկապես ընտրական համակարգի տարրերի վերիանումը: Քանի որ ընտրական համակարգի տարրերը բազմաթիվ են և բազմանույթ, այդ իսկ պատճառով ատենախոսության մեջ փորձ է արվել վեր հանել ընտրական համակարգի առավել սկզբունքային, էական և որոշիչ տարրերը: Մասնավորապես դրանք են ընտրակարգը, ընտրական հանձնաժողովների համակարգը, ընտրողների գրանցման համակարգը, թեկնածուների գրանցման համակարգը, նախընտրական քարոզության կարգը, քվեարկության կարգը, որոնք էլ աշխատանքի հետագա գործիքներում են-թարկվել են վերլուծության:

Երկրորդ՝ «Ընտրական համակարգ» մեղ իմաստով և դրա տարատեսակները» պարագրաֆում քննարկվում են ընտրակարգի և դրա տարատեսակների հետ կապված ընդհանուր տեսական հիմնախնդիրները:

Ընտրակարգը ընտրական համակարգի տարրերից մեկն է: Աշխատանքում ընդհանուր առմամբ ուսումնասիրվել են ընտրակարգի տարրեր տեսակներն ու տարատեսակները, դրանց առավելություններն ու թերությունները: Գոյություն ունեն ընտրակարգի տարրեր տեսակներ, որոնցից յուրաքանչյուր ունի իրեն բնորոշ առավելություններն ու թերությունները, և դրանցից ոչ մեկը կատարյալ չէ: Ընտրակարգերի թերություններն ու առավելությունները լայնորեն քննարկվում են իրավաբանական գրականությու-

նում, սակայն այդպես էլ միատեսակ մոտեցում չի ձևավորվել այն հարցում, թե որ ընտրակարգն է առավել ճիշտ: Այդ առումով, յուրաքանչյուր երկիր ինքնուրույն է ընտրում համապատասխան ընտրակարգը՝ ելնելով սեփական իրավական, քաղաքական, սոցիալական և այլ առանձնահատկություններից: Թերևս, Հայաստանի Հանրապետության դեպքում առավել ողջունելի տարրերակ է դիտվում խառը ընտրակարգը, որի դեպքում հնարավոր է լինում քաղել ընտրակարգերից յուրաքանչյուրի առավելությունները:

Ընտրակարգի հետ սերտորեն առնչվում են ընտրատարածքները: Ընտրատարածքների ձևավորումն, առաջին հայացրից պարզ մի գործընթաց է, այնինչ, իրական պատկերն այլ է: Ընտրատարածքների ձևավորումը սերտորեն առնչվում է ընտրական իրավունքի կարևոր սկզբունքներից մեկի՝ հավասար ընտրական իրավունքի հետ, որն իր ամրագրումն է ստացել ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ քաղմաքիվ միջազգային փաստարդություն: Ընտրատարածքները պետք է կազմակորվեն այնպես, որ դրանցից յուրաքանչյուրում գրանցված ընտրողների թիվը լինի հնարավորինս հավասար: Հակառակ դեպքում կիսախտվի հավասար ընտրական իրավունքի սկզբունքը, և ընտրությունների արդյունքները չեն արտացոլի աժրող բնակչության կամքը:

Մասնավորապես, ներկայում գործող համակարգի պարագայում Հայաստանի Հանրապետությունում հնարավորություն է ստեղծվում, որպեսզի ընտրատարածքները կազմակորվեն ընտրողների թվի էական տարրերությամբ: Ատենախոսության մեջ վերլուծվել է ընտրատարածքների կազմավորման ներկայիս համակարգը և ներկայացվել են որոշակի եզրահանգումներ՝ առաջարկելով ընտրողների թվի հավասարության սկզբունքը կիրառել բոլոր ընտրատարածքների համար (այլ ոչ միայն մարզի սահմաններում գտնվող ընտրատարածքների միջև):

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է ընտրական հանձնաժողովների համակարգին, ինչպես նաև ընտրությունների մասնակիցների գրանցման համակարգին: Երկրորդ գլուխը բարեկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆը՝ «Ընտրական հանձնաժողովների համակարգը» ուսումնաիրում է ընտրական հանձնաժողովների համակարգը, դրանց կազմավորման և գործունեության կարգը:

Ընտրական համակարգի ամենակարևոր և առանցքային տարրերից է հանդիսանում ընտրական մարմինների համակարգը: Դրա կարևորությունը պայմանավորված է նրանով, որ ընտրական մարմիններին է վերապահվում ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ

կարևոր որոշումներ ընդունելու և իրականացնելու լիազորությունը, ուստի յուրաքանչյուր ընտրական համակարգ չափազանց կարևոր տեղ է հատկացնում այն հանգամանքին, թե ինչպիսի մարմինների է վերապահվելու նման կարևոր լիազորությունը:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման գործառույթը տարբեր երկրներում վերապահված է տարբեր մարմինների: Ընդհանուր առմամբ, այդ մարմինները կարելի է բաժանել երկու խմբի՝

- կառավարական մարմիններ,
- անկախ ընտրական մարմիններ, որոնք գործում են կառավարությունից անկախ:

Ընդորում, դրանցից յուրաքանչյուրն ունի իր բազմաթիվ տարատեսակները:

Սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, ընտրությունների կազմակերպման և անցկացման գործառույթը կառավարական մարմիններին տրվում է հիմնականում ընտրությունների անցկացման ավանդույթներ ունեցող զարգացած ժողովրդավարական երկրներում, որտեղ այդ մարմինները ունեն հասարակության վստահությունը, և որտեղ հնարավոր է լինում ապահովել որպեսզի կառավարությունը անհարկի չմիջամտի ընտրական գործընթացին: Իսկ նոր զարգացող և դեռևս ընտրական մշակույթ չձևավորած երկրներում ընտրությունների կազմակերպման և անցկացման լիազորությունը տրվում է անկախ ընտրական հանձնաժողովներին: Նման երկրներում ընտրական գործընթացի կազմակերպման լիազորությունը կառավարությանը հանձնելը հղի է այն վտանգով, որ գործող իշխանությունները կարող են այդ լիազորությունները օգտագործել ի շահ իրենց:

Ուստի, նորանկախ երկրների համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, լավագույն տարբերակը դեռևս անկախ ընտրական հանձնաժողովների միջոցով ընտրությունների կազմակերպումն է: Դա է ապացուել նաև եվրոպական նմանատիպ շատ երկրների փորձը:

Երկրորդ պարագրաֆում՝ «Ընտրողների գրանցումը /ակտիվ ընտրական իրավունք/», ուսումնասիրություն են ընտրողների գրանցման համակարգի և ակտիվ ընտրական իրավունքի իրացման հիմնախնդիրները:

Ընտրողների գրանցումը հանդիսանում է ընտրական համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը: Ընտրողների գրանցմանը նախապես հստակեցվում է այն անձանց շրջանակը, ովքեր ունեն ընտրելու իրավունք և կարող են մասնակցել ընտրություններին: Ընտրողների ճիշտ գրանցու-

մից է մեծապես կախված քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման հնարավորությունը: Իսկ ընտրելու իրավունքը հանդիսանում է անձի կարևոր սահմանադրական իրավունքներից մեկը: Այդ պատճառով ընտրողների գրանցման գործընթացը պահանջում է մանրամասն իրավական կարգավորում և դրա նկատմամբ ներկայացվում են քազմարիվ պահանջներ:

Ընտրողների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ընտրացուցակներ կազմելու միջոցով, որտեղ, ինչպես ցույց է տալիս փորձը, առկա են բազմաթիվ խնդիրներ: Դրանցից ամենախնդրահարույցն է արտասահմանում գտնվող քաղաքացիների գրանցման հիմնախնդիրը:

Ներկայումս արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների համար առանձին ընտրական ցուցակներ չեն կազմվում և վերջիններս հնարավորություն չեն ունենում իրացնելու իրենց ընտրական իրավունքը, եթե գտնվում են արտասահմանում /քացառությամբ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցությունների ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին՝ ինտերնետային քվեարկության եղանակով/: Նշվածը որոշակի հակասության մեջ է մտնում ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հետ, քանի որ դրանով ընտրելու իրավունքից փաստացի գրկում են այն քաղաքացիները, ովքեր տվյալ պահին գտնվում են այլ երկրներում (այդ թվում՝ օրինական կարգով):

Եղրորդ պարագաները՝ «Թեկնածուների գրանցումը /պահիվ ընտրական իրավունք/» վերաբերում է թեկնածուների գրանցման և պահիվ ընտրական իրավունքի իրացման հիմնախնդիրներին:

Թեկնածուների գրանցումը հանդիսանում է ընտրական համակարգի կարևոր տարրերից մեկը, քանի որ դրա շրջանակներում է որոշվում այն անձանց շրջանակը, որից պետք է ընտրվեն տվյալ երկրի նախագահը, պատգամագործները, այլ կարևոր պաշտոնատար անձինք: Ուստի, կարևոր է, որպեսզի թեկնածուների գրանցումը իրականացվի քափանցիկ, առանց խտրականության, բռնորդի համար հավասար պայմաններով:

Թեկնածուների գրանցումը բարդ համակարգ է, որն իր մեջ ներառում է թեկնածուների առաջադրումը, թեկնածուների գրանցման, գրանցման մերժման, գրանցման անվավեր ճանաչման հիմքերը և կարգը, թեկնածուներին ներկայացվող պահանջները /ցենզերը/, թեկնածուների իրավական կարգավիճակը և այլ հարցեր: Այստեղ հատկապես կարևորվում է թեկնածուներին ներկայացվող պահանջների /ցենզերի/ սահմանման հարցը, ո-

րում առկա են որոշ խնդիրներ: Թեկնածուներին ներկայացվող պահանջների սահմանումը ինքնանապատակ չէ: Դրանցից յուրաքանչյուրի սահմանումը հետապնդրում է որոշակի նպատակ: Մասնավորապես, ստորագրությունների հավաքագրման և ընտրական գրավի սահմանումը նպատակ ունի կանխել չնշին հանրային աջակցություն ունեցող թեկնածուների առաջարկումը: Այնինչ, ստորագրությունների հավաքագրման պահանջի փոխարեն ընտրական գրավի չափի մեծացումը չի նպաստում հետապնդվող նպատակի իրականացմանը: Այս առումով առկա է անհրաժեշտություն այդ պահանջների մասով կատարելու որոշակի փոփոխություններ:

Ստենախտառթյան երրորդ գլուխը վերմագրված է «Նախընտրական քարոզությունը և քվեարկության կարգը»: Առաջին պարագագում ըննարկվում են նախընտրական քարոզության հիմնախնդիրները:

Նախընտրական քարոզության կարևորությունը պայմանավորվում է նրանով, որ ընտրության արդյունքները մեծապես կախված են լինում թեկնածուների կողմից իրականացվող քարոզությունից: Դրա իրավական կարգագրման գլխավոր նպատակը կայանում է նրանում, որպեսզի օրենտրությունը բռնորդ թեկնածուներին ընձեռի նախընտրական քարոզություն իրականացնելու հավասար հնարավորություններ, որպեսզի թեկնածուներից ոչ մեկը մյուսների նկատմամբ անհարկի առավելություն չափանական է: Բացի այդ, նախընտրական քարոզությունը կարևորվում է նաև նրանով, որ անհրաժեշտ է, որպեսզի ընտրականգվածը մինչ քվեարկությունը բավարար տեղեկատվություն ստանա թեկնածուների, նրանց կողմից առաջարկվող նախընտրական ծրագրերի և խոստումների մասին: Ուստի, այս առումով շատ կարևոր է, որպեսզի այդ տեղեկատվությունը լինի մատչելի և օրյեկտիվ:

Հայաստանի Հանրապետությունում նախընտրական քարոզության հարցում առկա են բազմաբնույթ խնդիրներ, իսկ այդ խնդիրների լուծման համար որպես կարևոր ելակետ պետք է դիտարկել նախընտրական քարոզության բուն նպատակը: Նախընտրական քարոզության իրականացումը պետք է ծառայի նախընտրական քարոզության բուն նպատակի իրագործմանը: Ընդհանուր առմամբ, նախընտրական քարոզության նպատակը հանգում է հետևյալին՝

▪ անհրաժեշտ է, որպեսզի ընտրականգվածը մինչ քվեարկությունը հնարավորություն ունենա ծանոթանալու թեկնածուներին, նրանց կողմից առաջարկվող ծրագրերին և մոտեցումներին՝ ստանալով օբյեկտիվ տեղե-

կատվորյուն, որպեսզի կարողանա ճիշտ կողմնորոշվել ընտրության հարցում և կատարել տեղեկացված ընտրություն,

▪ անհրաժեշտ է, որպեսզի բոլոր թեկնածուները հնարավորություն ունենան ներկայանալու ընտրազանգվածին և ներկայացնելու իրենց կողմից առաջարկվող ծրագրերն ու մոտեցումները, որը նույնպես վերջիվերջո ուղղված է առաջին նպատակի իրագործմանը:

Այսպիսով, նախընտրական քարոզությունը ինքնանպատակ չէ, այն ուղղված է որոշակի նպատակների իրականացմանը, հետևաբար, ըստ այդ նպատակների պեսը է իրականացվի նախընտրական քարոզության ընդհանուր կարգավորումը:

Առենախոսության երրորդ գլխի երկրորդ՝ «Քվեարկության կարգը» վերտառությամբ պարագրաֆում ուսումնասիրվում են քվեարկության կարգը, քվեարկության այլնտրանքային եղանակների կիրառման հեռանկարները:

Քվեարկության արդյունքում ուղղակիորեն իրացվում է անձի ամենակարևոր քաղաքական իրավունքներից մեկը՝ ընտրելու իրավունքը: Այդ պատճառով այն գտնվում է հասարակության առավելագույն ուշադրության կենտրոնում և պահանջում է առավել մանրամասն իրավական կանոնակարգում:

Ինչպես ամբողջ ընտրական համակարգը, այնպես էլ քվեարկության համակարգը, անընդհատ զարգանում է և կարիք ունի կատարելագործման: Դա հատկապես պայմանավորված է ներկայիս գիտատեխնիկական զարգացման մակարդակով, ինչի արդյունքում անխուսափելի է դառնում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը ընտրական համակարգ: Այդ իսկ պատճառով, քննարկելով Հայաստանի Հանրապետությունում քվեարկության համակարգը՝ անհրաժեշտ է քննարկել այլնտրանքային քվեարկության մերողների կիրառման հնարավորությունը և նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հայաստանի Հանրապետությունում քվեարկության այլնտրանքային մերողները ներկայում խիստ սահմանափակ են, ինչի արդյունքում որոշակիորեն նեղանում են քաղաքացիների կողմից ընտրական իրավունքի իրացման հնարավորությունները: Այդ առումով, կենսական անհրաժեշտություն է առաջանում ընդլայնելու այլնտրանքային քվեարկության մերողների կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում՝ ապահովելու համար ընտրական իրավունքի իրացման արդյունավետ մեխանիզմներ: Մասնավորապես, առաջարկվում է աստիճանաբար կատա-

րելագործել էլեկտրոնային քվեարկությունն՝ ընդլայնելով այդ մեթոդից օգտվելու իրավունքը ունեցող անձանց շրջանակը:

Ընդհանուր առնամբ, էլեկտրոնային (ինտերնետային) քվեարկության ներդրումը բավականին բարդ գործընթաց է, և այս հարցում շտագողականությունը անտեղի է և կարող է լրջորեն խաթարել ընտրական համակարգը: Բոլոր դեպքերում էլեկտրոնային քվեարկությունը կարող է հանդիսանալ միայն որպես այլնտրանքային քվեարկության միջոց, և չպետք է և չի կարող ամբողջությամբ փոխարինել քվեարկության ավանդական եղանակներին:

Եղանակացույցում ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները, որոնք հանգել են հետևյալին՝

- «Ընտրական համակարգ» հասկացության շուրջ կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները բոլոր են տալիս առավել ընդհանրական կերպով տալու ընտրական համակարգի հետևյալ սահմանումը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների որոշման հետ կապված և իրավական նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ամբողջություն, այլ կերպ ասած՝ հանրային իշխանության մարմինների ընտրության կարգը:

- Ընտրական համակարգն ունի բազմաթիվ տարրեր, սակայն կարելի է հատկապես առանձնացնել առավել սկզբունքային և էական հետևյալ տարրերը՝ ընտրական հանձնաժողովների համակարգը, ընտրողների գրանցման համակարգը, թեկնածուների գրանցման համակարգը, նախընտրական քարոզության կարգը, քվեարկության կարգը, ընտրությունների արդյունքների որոշման կարգը:

- Անհրաժեշտ է «Ընտրական համակարգ» հասկացույցունից տարանցանել «Ընտրակարգ» հասկացույցունը, որպես քվեարկության արդյունքների հիման վրա ընտրությունների արդյունքների որոշման կարգը:

- ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ ընտրատարածքներ կազմավորելիս անհրաժեշտ է որպես հիմնական ելակետ ընդունել բոլոր ընտրատարածքների բնակչության թվաքանակի միջև հավասարության ապահովման սկզբունքային անհրաժեշտությունը:

- Հայաստանի Հանրապետության համար ընտրական հանձնաժողովների միջոցով ընտրությունների կազմակերպման մոդելի ընտրությունը ներկայում արդարացված է:

- Պետական կառավարման մարմինների կողմից ընտրությունների կազմակերպման և անցկացման համակարգն առայժմ պետք է դիտարկել որպես հեռահար նպատակ:

- Անհրաժեշտ է վերականգնել օտարերկրյա պետություններում քվեարկության կազմակերպումը՝ համապետական ընտրությունների ժամանակ օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին ներառելով առանձին ընտրացուցակներում:

- Որպեսզի հնարավոր լինի կանխել չնշին հանրային աջակցություն ունեցող թեկնածուների առաջադրումը, անհրաժեշտ է որոշ վերապահումներով հանդերձ վերականգնել ընտրողների ստորագրություններ հավաքագրելու պահանջը:

- Նախընտրական քարոզության ներկայիս համակարգը բարեփոխելիս անհրաժեշտ է որպես հիմք ընդունել նախընտրական քարոզության բուն նպատակին հասնելու անհրաժեշտությունը: Իսկ նախընտրական քարոզության նպատակն ի վերջո կայանում է նրանում, որպեսզի ընտրացանգվածը մինչ քվեարկությունը հնարավորություն ունենա ծանոթանալու թեկնածուներին, նրանց կողմից առաջարկվող ծրագրերին և մոտեցումներին՝ ստանալով օրյեկտիվ տեղեկատվություն, որպեսզի կատարի տեղեկացված ընտրություն:

- Ներկայիս տեխնոլոգիական գարգացման դարաշրջանում անխուսափելի է դառնում բարձր տեխնոլոգիաների մուտքը ընտրական համակարգ և քվեարկության այլնտրանքային մեթոդների կիրառումը: Հայաստանի Հանրապետության համար քվեարկության այլնտրանքային մեթոդ է էլեկտրոնային քվեարկությունը, որն առաջին անգամ առաջարկում է նոր ընտրական օրենսդիրը արտասահմանում գտնվող դիվանագիտական ներկայացուցիչների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձանց արտասահմանում գտնվող ներկայացուցիչների աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների համար: Կարծում ենք, անհրաժեշտ է գարգացնել նշված համակարգը և աստիճանաբար ընդլայնել դրանից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ իրապարակումներում.

1. «Ընտրատարածքների կազմավորման սկզբունքները», «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան 2010, N 1, էջեր 144-152:
2. «Ընտրացուցակների կազմման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Օրենք և իրականություն» միջազգային իրավաբանական գիտական հանդես, Երևան 2010, N 12 (182), էջեր 14-17:
3. «Թեկնածուներին առաջարկվող պահանջները Հայաստանի Հանրապետությունում», «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան 2010, N 3 (4), էջեր 55-61:

САРКИС ЛЕВАЕВИЧ ТОРОСЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ
ИЗБИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена основным проблемам избирательной системы в Республике Армения. Выборы, будучи одним из основополагающих институтов конституционного порядка, являются очень важным политическим и правовым событием для каждой страны. Но роль и значение выборов становится наиболее важным особенно в новых независимых государствах, какой является Республика Армения, которая делает свои первые шаги на пути к демократическому строю. Но только наличие выборов не достаточно для того, чтобы можно было говорить о реальной демократии. Для этого надо, чтобы выборы были свободными, честными и на самом деле выражали волю народа, что в большей степени зависит от системы подготовки и проведения выборов, чем и является "избирательная система". Поэтому очень важно исследовать эту систему и выявить ее основные проблемы. Ее важность еще более повышается, принимая во внимание особенно то, что избирательная система остается одним из противоречивых вопросов страны с момента достижения независимости.

Основной целью диссертации является выявление основных проблем избирательной системы, анализирование этих вопросов и выдвижение научно-обоснованных предложений по решению этих вопросов и выявлению возможных перспектив по развитию избирательной системы.

Перед исследованием основных проблем избирательной системы важно выявить понятие "избирательная система". Вот почему диссертация в первую очередь пытается проанализировать понятие избирательной системы. Нет общепринятого понятия избирательной системы ни в теории, не на практике, вследствие чего она представляется по-разному. Иногда она употребляется как система выборов публичной власти, в другом случае, как метод выявления результатов выборов. Более того, в одном случае она

понимается как система общественных отношений, в другом случае как совокупность правовых норм, в третьих только те общественные отношения, которые регулируются нормами права. Поэтому диссертация пытается выявить реальное значение этого понятия и важнейшие элементы избирательной системы. Только после этого диссертация анализирует каждый элемент избирательной системы по-отдельности.

Избирательная система имеет очень много элементов, но диссертация касается только важнейших и решающих элементов избирательной системы, которые в общем составляют сущность избирательной системы. В диссертации основными элементами избирательной системы являются система избирательных органов, система номинации и регистрации кандидатов, система регистрации избирателей, система предвыборной агитации, система голосования.

В частности, в диссертации исследуются следующие вопросы: системы избирательных органов в мире, их виды, позитивные и негативные аспекты каждого из них, целесообразность их применения в РА, особенности формирования и деятельности избирательных комиссий, особенности системы регистрации избирателей, формирование избирательных списков, система номинации и регистрации кандидатов, избирательные цензы, особенности проведения предвыборной агитации, система финансирования предвыборной компании, система голосования, разные альтернативные системы голосования, перспективы развития и расширения таких методов в Республике Армения и т.д..

Исследование сделано в контексте лучшей международной практики, принимались во внимание избирательные системы развитых демократических стран, исследовались разные документы (оценки, руководящие принципы, отчеты и т.д.) знаменитых международных организаций в этой сфере и т.д.

В конце диссертационной работы подведены итоги работы. Кроме выявления основных проблем избирательной системы РА, даются соответствующие выводы о путях и методах решения этих проблем и предложений по возможным перспективам развития национальной избирательной системы.

THE MAIN ISSUES OF FORMING AND DEVELOPING ELECTORAL
SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

SUMMARY

The dissertation relates to the main issues of electoral system in the Republic of Armenia. Elections as one of the basic institutions of constitutional order are very important political and legal events for each country. As for the role and meaning of elections, they are more important especially in the countries that have acquired independence recently, such as the Republic of Armenia which is taking its first steps towards the democratic order. But the existence of elections is not sufficient enough to talk about real democracy. In case of real democracy, the elections need to be free, fair and genuinely reflect people's will and they should mostly depend on the system of organizing and holding elections which is the "electoral system" in general.

For that reason it is very important to find out and analyze that particular system and its main issues. Its importance is highlighted especially when we take into consideration the fact that electoral system has been one of the most contradictory issues in the country since it acquired independence.

The goal of the dissertation is to reveal the main problems relating to the electoral system, analyze those issues and make significantly justified proposals to solve them as well as bring forward the possible perspectives to improve it.

Before analyzing the main issues of the electoral system it has been important to throw light on the concept of "electoral system" itself. That is why the dissertation first of all tries to analyze the concept of the "electoral system". There are not any common explanations of the concept either in theory or in practice. So eventually it is defined in many different ways. Sometimes it is used to denote a system of election of public bodies, on the other hand it is used as a method of summing up the results of elections. Moreover, it is used to mean public relations in general or it represents a group of legal norms. In some cases it is even used to express such relations that are regulated by the legal norms. Therefore the work tries to reveal the real meaning of that concept and find out the main elements

compiling the electoral system. Above all the dissertation analyzes each element of electoral system.

The electoral system contains many elements, but the dissertation relates to the most significant and decisive elements of it that are generally defining the whole essence of electoral system. The main elements of electoral system are the system of electoral bodies as a whole, the nomination system, registration of the candidates, the voters' registration system, electoral campaign system and finally the voting system.

Particularly the paper relates to the following issues: the examination of electoral body systems introducing governmental and non-governmental electoral bodies. It tries to reveal the positive and negative aspects of each one as well as the expediency of the composition of electoral commissions, the main ways of their operation, the legal status of commission members. It also examines the voters' registration systems and the ways the lists are being made, as well as the main body responsible for that process. Also an attempt has been made to touch upon the points that are causing problems within the system of nomination and registration of candidates, the question of defining their legal status and elective requirements imposing on the candidates. As well as it deals with the main features of financing and organizing the electoral campaign, examination of other alternative voting systems and the real perspectives of developing such kind of methods in the Republic of Armenia.

The examination is done on the grounds of international practice, it has examined the electoral systems of developed democratic countries and correspondingly the documentary system of well-known international organizations on this field (assessments, guidelines, reports etc.).

At the end of the dissertation some conclusions are made on the main problems of the electoral system in the Republic of Armenia. Apart from emphasizing those problems, it gives appropriate conclusions about the ways and methods of resolving them and proposals of possible perspectives to improve and develop the national electoral system.